ՄԽ/298-2022

«___»_____ 202__ թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի
նախագահ տիկին Շուշան Դոյդոյանին

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,
Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի գրության՝ հայտնում ենք հետևյալը.
Կադաստրի կոմիտեն տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն չի իրականացնում, քանի որ տեղեկատվություն ստանալու հարցումներ Կադաստրի կոմիտեն ստանում է ինչպես «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով, այնպես էլ՝ սպասարկման գրասենյակներում և առցանց՝ https://www.e-cadastre.am/ էլեկտրոնային հարթակի միջոցով:
Ստացված հարցումների վիճակագրությունը վարվում է ինքնաշխատ եղանակով, իսկ հարցումների և դրանց պատասխանների քանակի վերաբերյալ տեղեկությունները մշտապես հասանելի են մեր պաշտոնական կայքի գլխավոր էջում:
Կայքի վերաթարմացման աշխատանքներով պայմանավորված՝ այս պահին շատ կարճ ժամանակով տեխնիկական հարցեր են առաջացել, սակայն առաջիկա օրերին մասնագետները կավարտեն աշխատանքները և ARPIS-ից ստացված տվյալները, անընդհատ ավտոմատ թարմացմամբ, զետեղված կլինեն կայքում:
Կադաստրի կոմիտեում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է հանրային կապերի բաժնի պետի պաշտոնը զբաղեցնող անձը: Այս պահին տվյալ պաշտոնը զբաղեցնում է Մարինե Վարդևանի Սադյանը (էլ.հասցեներ՝ press@cadastre.am, marine.sadyan@cadastre.am, հեռախոսահամարներ՝ 060474109, 077185685):
Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կոմիտեի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը տեղեկատվության ազատության վերաբերյալ վերապատրաստման դասընթացի է մասնակցել 2017 թվականի դեկտեմբերին, իսկ նախորդ տարվա փետրվարի 15-16-ին մասնակցել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կազմակերպած «Տեղեկատվության ազատությունը կառավարման համակարգում» խորագրով երկօրյա աշխատաժողովին:

1/12/2022

X

ՄՀԵՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: KHACHATRYAN MHER 4108790022 Միեր Խաչատրյան

Կատարող՝ Մ. Սաղյան
Հանրային կապերի բաժնի պետ
Հեռ.՝ 060-474109